

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարեկան 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրիչ դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусако“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միջնորդական երեւոյթ—ն էր քիչ աստուծոյ
թիւն: Նամակ Մոսկովայից: Ներքին լուրեր:—
էր աստուծոյ թիւն: «Մասիս» թղթա-
կցութիւն: Խտալիա: Թիւրքիա: Նամակ Թիւր-
քիայից: «Մշակ» հեռագիրներ: Յայտարարու-
թիւններ: Տեղեկացոյց:— Բանասիրական: Հայ
կերպ:

ՄԻԹՈՒՄԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԻ

Մարտի 11-ին սկսվեցան
Թիֆլիսի արհեստավարների ըն-
կերութեան մէջ դասախոսու-
թիւններ հայերէն լեզուով:

Ընթացիկ դասախոսութիւնը լը-
սելու ցանկացողները այնքան բազ-
մաթիւ էին, որ արհեստավարնե-
րի ընկերութեան դահլիճը չէր
կարող պարունակել բոլոր ցան-
կացողներին և մեծ մասը մնաց
առանց տոմսակի:

Գտնվեցան մինչև անգամ այն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

«Կինը է այն առանցքը, որի շուրջը
պտտւում է քաղաքակրթութիւնը»:

Խօսենք Թիֆլիսի ունեւոր ընտանիքի աղջկայ
մանկութեան վրա: Երկու տարեկան հասակում
ծննդաբանը նրան տանում է որ և իցէ հասարակա-
կան այդի ման անկողն: Եթէ նա առաջին աղջիկ
ծնունդն է, բախտաւոր է լինում, սիրվում է,
և հէնց ծնած օրից վայելում է ճոխութիւն: Գեռ
չորս տարեկան չեղած, մայրը նրան հագցնում
է բոլորովին ֆանտաստիկական զգեստներ և
տանում է կլուբ, երբ լինում է «ընտանեկան
գիշեր» կամ երբ տալիս են մանկական բայ: Ա-
մառը նրան տանում են կօշոր կամ մի ուրիշ
ամառանոց, ուր նրա քնքշւոյ ղէմը մի փոքր
այրվում է արեգակի և արծալ օդի տակ: Աշուն-
քին նա դառնում է տուն, բաւական լցունած:

Գեռ հինգ կամ վեց տարեկան չեղած, նա
յայտնվում է իր մօր հիւրերին հասարակութեան
մէջ, երբ նա տալիս էր «վեշեր», ուր կնիկները
հաւաքված, կամ լոտո են խաղում, կամ թուղթ:
Մայրը զմայլվում է, տեսնելով, որ աղջիկը փոք-
րիկ ծառայութիւններ է անում հիւրերին: Լոտոի
համար լոբի է բերում, կամ հաւաքում է վեր-
թափված կարտերը: Ամբողջ ժամերով աղջիկը
անբուռն նստած, նայում է նրանց խաղին, և
լսում է նրանց շատ անգամ անպատշաճ խօ-
սակցութիւնները, և ժպտում է: Գա էլ մի տե-
սակ կրթութիւն է, որ ստացվում է օրինակից:
Մօր հասարակութեան մէջ երբեմն յայտնվում
է մի երկտարեկան, որ բոլորում է կոպիտ կատակ-
ներ. նա իրան ձևացնում է, թէ սիրահարված
է փոքրիկ աղջկայ վրա և իրան կոչում է նրա
ապագայ փեսայ:

Վերջապէս հասնում է ուսման ժամանակը:
Պէտք է նկատել, որ Թիֆլիսի հարուստ ընտա-
նիքներում սպասուսուրները և սպասուհիները բո-
լորը օտարազգիներ են. — ծառայողները վրացի

պիսիներ, թէ հայերի և թէ օ-
տարազգիների մէջ, որոնք տես-
նելով որքան մեծ էր դասախո-
սութիւնը լսելու ցանկացողների
թիւը, ծախում էին իրանց տոմ-
սակը կրկնապատիկ գնով: Եւ
գտնվում էին բազմաթիւ ցանկա-
ցողներ, որոնք ուրախութեամբ
վճարում էին տոմսակին պահան-
ջած կրկնապատիկ գինը:

Եւր անյետն ոգևորութիւնը
դէպի կենդանի խօսքը, այդ ձգ-
տումը ներկայ գտնվել հայոց հը-
րապարակախոսութեանը, շատ մը
խիթարական երեւոյթ է:

Մենք ի հարկէ ուրիշներին
ենք թողնում դատել այն բանի
վրա թէ որքան աջողվեցաւ կամ
չաջողվեցաւ առաջին դասախոսու-
թիւնը, մենք աւելորդ ենք հա-
մարում, նոյնպէս, երկար ու բա-

կամ իմեք, ծննդաբան օսեթոհի, իսկ վերջին
ժամանակներում սովորութեան մէջ մտան և
ուսու աղաները: Երեւոյթների սկզբնական
կրթութիւնը համարեալ յանձնված է նրանց
ձեռքը: Աղջիկը ծննդաբան սովորում է վրացե-
րէն, իսկ ուսու աղաները ուսուցել է նրան
ուսուց լեզուն: Մայրերի լեզուից նա մի բառ
չէր գիտէ, որովհետեւ այդ լեզուով ընտանիքի
մէջ ոչ ոք չէ խօսում: Օտար լեզուների մէջ
ունեցած պարզութիւնը բաւական հեշտացնում է
նրան սովորել օտարազգի դպրոցներում: Հայոց
ծխական դպրոցները անպատշաճ են համար-
վում: Աղջկան տալիս են կամ պանսիօն բաւա-
կան թանգ գնով, կամ իզական գիմնազիա: Սա-
կաւ է պատահում, որ տանը հրաւիրէին վար-
ժապետ:

Պանսիօնում թեթիւ կերպով սովորեցնում են
աշակերտուհիներ օտար լեզուով կարգալ և սխալ-
ներով գրել, փոքր ինչ տեղեկութիւն են տալիս
պատմութիւնից, աշխարհագրութիւնից և թուա-
բանութիւնից: Բնական գիտութիւնների հետ
հազիւ թէ ծանօթացնում են, իսկ կենսաբ. գործ-
նական կողմերի հետ նա մնում է բոլորովին ան-
ծանօթ: Այն, որ սովորում է կենսաբ. համար,
սահմանափակվում է մի քանի սպիտակաւ սո-
վորութիւններով: Թէ որպէս պատշաճ է պահել
իրան հասարակութեան մէջ, որպէս գլուխ տալ
և այլն: Աւելացնում են դրանց վրա պարը և
պիսիսի վրա անկողն, որը միշտ ամառում է նա
օտարների մօտ անկողն: Բայց ինչ որ գլխաւորն
է, դա է պանսիօնի մէջ տիրող ոգին և ուղ-
ղութիւնը, որ ներշնչում է նրա մէջ միայն թե-
թեամտութիւններ... Աղջիկը կորցնում է իր ինք-
նուրոյնութիւնը և բնական նրա մէջ ոչինչ չէ
մնում: Ամեն ինչ նրա մօտ կեղծ է լինում, թէ
ձայնը, թէ խօսելու ձևը, թէ աչքերի հայեացքը
և թէ ժպտը: Հիմնաւոր նրա մէջ ոչինչ չէ կա-
րողը դարդակ է, թէ սիրտը և թէ գլուխը:
Եւ ուրիշ կերպ լինել կարող չէր. արեւմտեան
կրթութիւնը նա ստանում է երկրորդական ձեռ-
քից...

Պանսիօնից անցնում են «մօղնի» աղջկան,
երբ մարդու տալիս ժամանակը մօտենում է:
Գործող կրթութիւնը լրացնում է մայրը: Երե-
ւակայեցէք ձեզ մի մայր, որ յանկարծ արեւե-
լեան կենսաբ. արեւմտեան մէջ էր ընկել,— փակ
ընտանիքից դէպի արծալ աշխարհ էր դուրս

րակ ապացոյցներ բերել հրապա-
րակախօսութիւնների օգտուե-
տութեան վրա, առհասարակ,—
մենք կուզենայինք միայն մասնա-
ցոյց անել մեր հայ ժողովրդի
ունեցած համակրութեան վրա
դէպի իր մայրերի լեզուով կար-
գացվող դասախօսութիւնները:

Եւր համակրութիւնը ցոյց է
տալիս թէ դասախօսութիւնը լը-
րագրութեան, ուսումնարանի և
թատրոնի հետ միասին, դառ-
նում է մեր հասարակութեան
համար մի անհրաժեշտ կենսա-
կան պահանջ:

Մեր նոր, աշխարհաբառ, գը-
րական լեզուն արդէն իր վար-
գացման այն աստիճանին է հա-
սել, որ նրանով կարելի է ժողո-
վրդական ձևով գիտնական մտքեր
յայտնել: Եւ կենդանի խօսքը, լը-

եկել: Տարբերութիւնը անադին է: Կինը, որ
պատրաստված չէ աշխարհի համար, որ ծանօթ
չէ ժողովրդի հետ, որ չէր գիտէ կենսաբ. արտա-
քին պայմանները, միշտ անգոր կը լինի վտանգ-
ների դէմ: Գրանով պէտք է բացատրել շատ
մայրերի վարքը...

Աղջակներով պանսիօնից, աղջիկը բոլորովին
մի կողմ է ձգում գրքերը, նա սկսում է նայել
աւելի «մօղնի ժողովրդի» վրա: Բայց լինում
են այնպիսիներ, որ սկսում են կարգալ այն
գրքերը, որ պանսիօնում արգելված էին: Նրանք
դառնում են աւելի սանտիմենտալային, և ա-
ւելի ցնորամուտ: Թերի ուսումը և անհիմն կըր-
թութիւնը երբեմն առաջ են բերում տարա-
պայման անձնաւորութիւններ, այս պատճառով
զարմանալի չէ տեսնել, որ մեր թերութեանից
յայտնվում են երբեմն «նիւթիլոսոփաներ»: Մայրա-
յիղութիւնները չօշակում են միմեանց: Տգէտ,
անհաւատ, նախապաշարմունքներով լի և խա-
ւար ընտանիքը տալիս է շատ անգամ ծայրա-
յիղ ազատամիտներ, երբ կրթութեան լոյսը մօ-
տեցնում են նրան: Բայց այդպիսիների թիւը
մեր աղջիկների մէջ շատ փոքր է, և աւելի
են անցել միայն մէկի հետ ծանօթ լինելու:
Մինչև այսօր չեն կարող երևակայել մի ուրիշ
ողորմելի արարած, որ նրա նման մտաւոր հի-
ւանդութեան մէջ ընկած լինէր: Եւ յարգում էի
նրան, որովհետեւ նա ներկայանում էր որպէս
մի բոլոր ընտանիքի հնացած նախապաշար-
մունքների դէմ, բայց ցաւում էի, որ այնքան
դարդակ էր:

Ընտանիքը աւելի է փչացնում անմեղ աղջկան,
քան թէ պանսիօնը: Ընտանիքի բարքերի կոպ-
տութիւնը, վայրենութիւնը, կենսաբ. համարձա-
կութիւնը, վատ օրինակը,— ահա ընտանիքի
այն պայմանները, որոց մէջ կազմվում է աղ-
կալ բնաւորութիւնը սկսեալ նրա մանուկ հա-
սակից: Աղջիկը հօր երեսը համարեալ չէ տես-
նում: Նա առաւօտեան դիմում է իր գործին,
երբ բոլորը քնած էին. ամբողջ ցերեկը անց է
կացնում խառնութեամբ կամ կանտորում: Երբ դի-
չերը խառնութեամբ կողպվում է, այնտեղից ուղղակի
դիմում է կլուբ թուղթ խաղալու և վերադառ-
նում է տուն այն ժամանակ, երբ բոլորը նոյն-
պէս քնած էին: Լինում են գիշերներ, որ նա չի
էլ վերադառնում... Հայրը գուարճանում է
զբոսում, իսկ մայրը տանը «վեշերներ» է սար-

սարանը հասակ առաջների հա-
մար մի լաւ ուսումնարան է ի-
րանց մայրերի լեզուն սովորելու
համար....

Ժողովրդի այդ տեսակ համա-
կրութիւն, այդ տեսակ ոգևորու-
թիւն դէպի հրապարակական դա-
սախօսութիւնը, մեզ համոզում է
որ ժամանակը հասել է, երբ կա-
րելի է իրագործել Թիֆլիսում մի
մշտական շրջան դասախօսների,
որոնց նպատակը կը լինի ծանօ-
թացնել հասարակութիւնը գի-
տութեան այլ և այլ ճիւղերի հետ:

Բայց մի դժուարութիւն կայ-
դասախօսների շրջանը կախված է
միշտ այս կամ այն կողմից, նրա
յոթարութեանից տալ կամ մերժել
իր դահլիճը դասախօսութեան
համար....

Եւր պատճառով ցանկալի է,

քում և լոտոն ու թղթախաղը նրա սպիտակ ան-
պակաս են լինում: Աղջիկը սկսում է կամաց-
կամաց մասնակցել մօր զուարճութիւններին, և
եթէ կին հիւրերի հետ հրաւիրված էին տղա-
մարդիկ (որ առանց նրանց չէ լինում) աղջիկը
սկսում է ցոյց տալ իր բոլոր շնորքը, «փոկե-
տութիւն» անել նրանց հետ, և զուարճախօսու-
թիւնը ընդունում է վերին աստիճանի կրթական
կերպարանը:

Հաւայտութիւն և բարքերի համարձակութիւն,—
ահա երկու ախտեր, որ փռեցնում են մեր բար-
ձր և հարուստ դասի ընտանիքի բարոյական
հիմքը: Եւ ուրիշ կերպով չեն կարող բացատրել
այդ երեւոյթների պատճառները, բայց միայն
նրանով, որ Թիֆլիսի մեր բոլոր հարուստները,
ինչպէս ասում են, «նորաքաղաք մարդիկ են, այ-
սինքն ժողովրդութեամբ չեն ստացել իրանց
հարստութիւնը, այլ վաստակել են բազմից կամ
հանգամանքների յաջողութեամբ, և շատ ան-
գամ անազնիկ միջոցներով: Աղքատութիւնից յան-
կարծ հարստութեան տէր են դարձել: Այսպիսի
մարդիկ չեն կարող անօրինակ մի կանոնադր
տեսնութիւն և մի վայելուչ ընտանեկան
կենսաբ. Հաւայտութիւնը միշտ կից է լինում յան-
կարծահաս հարստութեան հետ և այս պատ-
ճառով նա երկրորդ սերունդին չէ հասնում:
Վայելուչ կենսաբ.— լի ամեն բաւականութիւն-
ներով, բայց մի և նոյն ժամանակ չափաւոր
սահմանի մէջ,— կազմվում է այն ժամանակ,
երբ հարստութիւնը անցնում է մի քանի սե-
րունդ: Եւ մի շատ հասարակ օրինակով կը պար-
զւում իմ միտքը, գցեցէք մի քաղցած հաւ մի
ցորենով վրը ամբարի մէջ, քիչ կը տեսնէք: Նա
կը սկսէ ոչ այնքան ուսու, որքան քթով ա-
նել և ոտներով ցորենը ցրել տալ այս կողմ
և այն կողմ: Նոր հարստացած աղքատը այդ
հաւի նման է լինում: Մի և նոյն օրինակով կա-
րելի է բացատրել և կիցը բարքի համարձակու-
թիւնը: Կինը, արեւելեան փակ կենսաբ. մէջ ճըն-
շված կինը, որին յանկարծ տալիս են ազատու-
թիւն (դա էլ մի տեսակ հարստութիւն է) չէ
կարող օրինաւոր կերպով գործադրել իր աղա-
տութիւնը, չէ կարող վայելել նրան որպէս
հարկն է:

(Կը շարունակվի)

որ հայոց լեզուով դասախօսել ցանկացողները ունենային իրանց սեփական ապաստան, որտեղ կախած չը լինէին ոչ որեւց....

Մենք կարծում ենք որ շուտով դասախօսների այդ տեսակ մշտական շրջան կարող է իր ապաստանը գտնել Թիֆլիսում նոր շինվող Թատրոնական դահլիճի մէջ:

Մենք լսում ենք որ դիտաւորութիւն կայ, հենց որ նոր Թատրոնը վերջացած կը լինի, կազմել հայոց—ուսաց—վրաց դասախօսների մշտական մի շրջան:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

1 մարտի

Մօսկվայում տարեց տարի հայ ուսանողների թիւը աւելանում է. հիմա բոլոր բարձր ուսումնարաններին համալսարանի ուսանողների թիւը, հասնում է մինչև 70, մեծամասնութիւնը կազմում են համալսարանական ուսանողները, յետոյ կայսերական Բազմաբուհական ուսումնարանի և երկրագործական Ակադեմիայի ուսանողները, իսկ լազարեան լրցէօնը և միւս ուսումնարանները բաժնում են յետին տեղը:

Եւ մտադիր չեմ խօսելու մանրամասն հայ ուսանողների մասին, այլ ուշք եմ դարձնում նրա մի քանի կողմերի վրա: Ուսանողները զանազան քաղաքներից և գիւղերից են, Թիֆլիսցիների թիւը համեմատելով ամենից շատ է, Թիֆլիսցիներն իրան գերազանց է դասում դաւաճողներից, նա հայրադարձում է թէ ինքը գիտէ ապրել, իսկ գաւառացիներն ոչ. նա չգիտէ հայերէն խօսել, գրականութիւն իմացող չէ կայ նըրանց մէջ: Իսկապէս Թիֆլիսցիները ոչ մի լեզու չը գիտեն—ոչ մայրենի և ոչ վրացերէն, իսկ ուսանողներն էլ մեծ առաջադիմութիւն չեն արել: Գաւառացիները բացառապէս գիտեն մայրենի լեզուն, գրականութիւն իմացողները նրանցից են: Համալսարանական հայ ուսանողները ունին մի վատ յատկութիւն, այն է նա միշտ իրան հեռու է պահում ընդհանուր ուսանողական շրջաններից. 4—5 տարի անցկացնելով համալսարանում, նա դուրս է գալիս բոլորովին չլինելով թէ ինչ հարցեր և գաղափարներ էին աղեկոծում նոր սերունդի միջոց և միտքը, նա այս շրջաններում շատ բաներ պէտք է մոռանար և շատ նորերը սովորէր: Մեծացած լինելով վաճառականական շրջանում, հայ ուսանողը ամեն մի քայլում գործ է դնում վաճառականական նեղ հայեացքների, մինչև անգամ երբ աղքատ ուսանողին նիւթական օգնութիւն են հասցնում վաճառականական նեղ և անբարոյական գաղափարները աչքի առաջ ունեն. այսպէս երբ մի աղքատ ուսանողի նիւթական օժանդակութիւն պէտք է տային, մի ուսանող առաջ բերելով աղքատի կինն օգական կերպարանքը, յայտնեց իր կասկածը նրա բարոյականութեան վերաբերմամբ. ուսանող Յարութիւն Յիմիլմովը չը գիտէ, որ կինն օգական կերպարանքի տակ կարող է Թաղաւորել Պէյօլի պարզ և ճշմարիտ հոգին.... Հասկանալի է, թէ որքան ծանր է աղքատ ուսանողի համար իր ընկերակիցների այսպիսի յարաբերութիւնը դէպի բարի գործը: Չարմանալի չէ որ մեր բարձր ուսում ստացածների մէջ երևում են բարոյապէս փչացած մարդիկ, քանի որ ուսանողութեան ժամանակ անցնում են մի այսպիսի չէօ լա:

Մօսկվայի հայ ուսանողների թիւը շատանում է, հետևապէս և շատանում է աղքատ ուսանողների թիւը. հասարակական օժանդակութիւնը անհրաժեշտ է, մանաւանդ մեծ պարտաւորութիւն կայ այն պարոնների վրա, որոնք լինելով մի ժամանակ ուսանող, գիտեն նրա նիւթական պիտոյքները, շատերը նրանցից օգտվել են նիւթական օժանդակութիւններով, լաւ կը լինէր, եթէ նրանք մտաբերէին անցեալը և կատարէին

իրանց պարտաւորութիւնը ներկայում. ուսանողների ձեռքում հիմա ևս կայ մի ամբողջ ցուցակ այն անձինքների, որոնք օգտվել են զանազան ժամանակի այս ուսումնարանները նիւթապէս արդէն ապահոված ապրում են իրանց սեփական բաւականութեան համար, թող չլինէ նրանք իրանց բարոյական պարտաւորութիւնը դէպի նոր սերունդը, մի և նոյնը կանէ նորը դէպի ապագան: Մոռացայ ասելու, որ հին պարտական ուսանողներից մէկը (որին դիմել էին նամակով) ուղարկելով իր պարտքը, ինչպէս վայել է մի փաստաբանի, աշխատել է իրաւաբանական կէտից ապացուցանել ուսանող նամակագրի խնդրի անհիմնութիւնը, սակայն փաստաբանին հասկացրել են, որ բացի իրաւաբանական պարտաւորութիւններից կան և բարոյական պարտաւորութիւններ, որոնց կատարելը սրբագործութիւն է:

Ինչպէս յայտնի է, Մօսկվայի համալսարանում և ուրիշ բարձր ուսումնարաններում կան կողմասեան թոշակաւորներ, բայց ցաւովն այն է, որ թոշակաւորները զիջաւորապէս հարուստներ են. նրանց համար արժեւանական թոշակը կազմում է Թատրոնի և այլ ստոր գործունէութիւնների ծախսը, մինչդեռ կան աղքատ ուսանողներ գուրդ թոշակից և առհասարակ նիւթական աղբիւրներից: Եւ գիտեմ մի քանի կողմասեան թոշակաւորներ, որոնք բացի արժեւանական թոշակից ստանում են ծնողներից 40—50 ռ. Մի ուսանող, որը ստանում էր 60—70 ռ. չամաչեց ներկայացնել աղքատութիւն և ան վկայական, արժեւանական թոշակ ստանալու համար. այսպիսի օրինակներ շատ կան, բայց արանք ապրիս են մի պատկեր ուսանողների բարոյականութեան. լաւ կը լինէր եթէ կողմասեան ուսանական շրջանը ուշք դարձնէր այս չարիքի վրա:

Անցեալ տարի Մօսկվայից հաղորդում էին մեր լրագրողներից մէկին մէջ, թէ հայ ուսանողները սկսել են պարապել գրականութեամբ, թէ նըրանք մտադիր են կազմելու զանազան դասագրքեր մեր ուսումնարանների համար. թողնելով միւս կողմ նրանց որքիչ նպատակները, կասեմ որ դասագրքեր կազմելը ուսանողների գործը չէ, որովհետև դեռ նրանք ծանօթ չեն մեր ուսումնարանների պիտոյքների հետ, նրանք չը գիտեն մանկավարժութիւն և վերջապէս չը գիտեն այն հայ մանկավարժներ, որոնք համար պիտի դասագրքեր կազմեն, սա մեր փորձառու ուսուցիչների գործն է. բայց ուսանողների համար ուրիշ նըրաւորութիւն և ծանապարհներ կան գործելու. նըրանց հարկաւոր է գլխաւորապէս իրանց զարգացնել մտաւորապէս և բարոյապէս գրականական շրջաններում. այս շրջանները պիտի լինեն մի դպրոց, որտեղ ուսանողների համալսարանները կհանգրդան մտաւորական լեզւով և կազմելով մտաւորական լեզւի պիտի մտնեն ապագայում կուրս ապագիւր. այն շրջանների մէջ պիտի որոշվեն և կանոնաւորվեն նրանց ձգտումները և իրէականները:

Ցաւովն այն է, որ ուսանողները մեծ մասը գրականական շրջանը կարծում է չինական պատով կապած մի հաստատութիւն, ուստի հեռու են պահում իրանց, թէպէտ և կան պարոններ որոնք աշխատում են սահմանափակել, սակայն նա ընդհանուր ուսանողական հաստատութիւն է և իւրաքանչիւր ուսանող մուտք ունի այնտեղ:

Մի քանի ուսանողներ պարագայ են ընթերցարանի հարցով, նրանք մտադիր են դիմելու արտ. հայր Սուրբէնյանցին և մեծ փառնանքին, որոնք համակրութեան վրա մի այսպիսի գեղեցիկ գործի անկարելի է կասկածել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

«Մշակի» երէկվայ համարը, մեզանից անկախ պատճառներով չը կարողացանք հրատարակել, այլ հրատարակում ենք այս համարը միայն այսօր:

Վաղը, չարաք օրը, մարտի 17-ին «Մշակը» չի հրատարակվի Գրիգոր լուսաւորչի տօնի պատճառով:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ մարտի 11-ին գիշերը փողոցում սպանել են մի ծերունի խոհարարի Ասում են որ սպանողը խոհարարի ընկերակիցն է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂՍԱՑՈՒԹԻՒՆԸ

Ձեր պատուական «Մասիս» հանապազօրեայ ըլլալուն, կուզեմ ընթերցողացը երկար երկար տեղեկութիւններ տալ:

Քղիէն եկած լուրերն ուտեմաց նուազութեան, գաւառին սովի սպառնալիցայ ներքե ըլլալը և ցարդ դպրոցներու և աղջկային բաւարարութեան ձեռնարկութիւն մը չըլլալը կը ծանուցանեն, որ մը Գուրգերէ գանգատ, որ մը տեղացի պէյերէ, որ մը կառավարութեան պաշտօնատարներէ, որ մը սղութեան, որ մը սովէ, հետեւաբար թշուառութեան ի թշուառութիւն վը դուրին առանց դիտաւորութիւն բոլորին պատճառն իրենց ազիտութիւնն է, իրենց անհոգութիւնն է, իրենց անմիաբանութիւնն է, իրենց անձնասիրութիւնն է. ուստի ինչպէս բերանացի՝ նոյնպէս և գրաւոր խորհուրդներ տուի իրենց թէ պէտք է օր յառաջ դպրոցներու բարեկարգութեան ձեռնարկեն, և ամեն ոք իր շահուն պէս աղգին շահերը պաշտպանէ որպէս զի թշուառութեան իսպառ ազատին:

Բալուցիք Նաթանեանի *) վէճերով դաւալ, իրենց այն եզական վաճը (Գաղղրաւ հայեաց Ս. Աստուածածին), իրենց մանչ և աղջիկ գաւառներն երեսի վրա թողուցած են: Գիտնալու են մը Բալուցի աղջկայիք որ անտի վէճերով ժամանակ վատնելն իրենց կենսական շահերուն կը վնասէ. ուստի պէտք է օր յառաջ սթափին, յանուն դպրոցաց և յանուն վաճըլն ընկերութիւն մը կազմեն, միաբան և միասիրտ աշխատին, գործեն և ներկայ տարտամ վիճակէն ազատին:

Ձմեկաձախի քաղաքին դպրոցը յետագէմ, աղջկանց վարժարան չունին, երբեք աշխատող չը կայ, ամենքն ալ Պօլսոյ ընկերութեան և առաջնորդին գալստեան աչք տընկած կը քնանան, առանց իրենց բոլորի վեց գիւղերուն նայելով գէթ անոնցմէ առնալու, որ քաղաքէն աւելի պայծառ եկեղեցիներ ու դպրոցներ ունին: Միսակ Պօլսէն նպատակ դաւով դպրոց չի պահուիր, պէտք է իրենք ալ օգնեն միաբանութեամբ:

Չարանձաղի 60 հայաբնակ գիւղերուն մէջ բնաւ դպրոց մը չը կայ, միայն կենդրոնն ուր 500 տուն բնակիչ կայ, դպրոց մ'ունի և մէկ վարժապետ մը 8 ոսկի տաւրեկանով: Աստիք իրենց կալուածական հին խնդիրը պատճառ կը բռնեն. երբեք չեն գիտեր խեղճերը թէ կալուածական խնդիրը դպրոցի հետ յարաբերութիւն չունի. այդ խնդիրը տեղութեան արդար օրինաց համաձայն անշուշտ պիտոր լուծի. և եթէ շատ տարիներ առկալս մնացած է, յանցանքը քիչ մը տեղական պաշտօնէից, մեծ մասն ալ իրենց տղիտութեան վրայ կը մնայ: Այս գաւառի ժողովուրդը վերոյիշեալ գաւառներէն աւելի ընդունակութիւն ունի. եթէ համոզող ըլլայ, ամեն գիւղ դպրոց կ'ունենայ, բայց աղքատ միջոցի մը կարոտութիւն ունի, և այն ալ քիչ աշխատանքով կ'ըլլայ. ինչ օգուտ որ գործող չունիմք:

Տօրոս լեւոն Հայերն, որ վերոյիշեալ գաւառներուն ամենէն աւելի ճշեալ և յետաքննող են, զարմանալն ընդունակութիւն մը ունին, այնպէս որ քիչ աշխատանքով երբեք գիւղի մէջ դպրոց ունեցան, թէ և միսակ հասարակ ընթերցման Այս գաւառը չըլլալ կայ գաւառներէն շուտ պիտոր լուսաւորչի շնորհիւ: Ամեն. Ս. Պարոնարը Հօր և Արաւառեան բազմաբնակ ընկերութեան:

Աւստի ուրախ սրտիւ կուգամ Մասիս միջոցաւ աւետել մերազնեից թէ Տեքսիմի հայաբնակ գիւղերու մէջ ուսանն ծաւալումն յիշեալ ընկերութիւնն ստանձնած և ըստ այնմ նախապատրաստութեան սկսած է: Այս տեղի ժողովուրդն, որ 3—4 դարերէ ի

վեր Գրգերու բարբարոսութեան ներքե ճընշեալ է, դարձեալ պահած է իր եկեղեցոյ բոլոր աւանդութիւնները, մայրենի լեզուն, Արարհաման հիւրասիրութիւնն, և նահապետական կենսքը: Իրենց բոլոր զգեստներն իրենց ձեռագործներն են. բամբակը կը մշակեն, կը մանեն, կը ներկեն, կտաւ և տաւրաղ կը գործեն, իրենց և կանանց ու տըղայոց զգեստները, անկողիններն և այլ պէտքերը կը հողան. իրենց սնուցած ոչխարներուն ու այծերուն բուրդերէն իրենց գլխարկ, կապայ և ալն կը շինեն. իրենց սնուցած կովերուն ու եղներուն ծերուկները մորթելով և պարարտները մատող ընկելով կաշիներն իրենց ոտքերուն կօշիկ կը շինեն և արօրի շղթայներ կը կարեն. իսկ շատերը բնական կօշիկ կը հագնին, այսինքն բոլորի կը քալեն: Հոս չեմ կրնար մոռնալ այն մատող աղայոց բոլորի ոտքով ստուգելի վրայ խաղ խաղալը, որոց վրա միտակ կտաւէ շապիկ մը մինչև ծունկերը ծածկած ուրիշ ոչինչ չունին հագած, և այսպէս ձմեռն սաստիկ ցուրտին սաւայցին մէկ ծայրէն միւս ծայրը կը սողան ու կուրախանան: Դիտմ'որ Պօլսեցիք չեն ուղեր հաւատալ այս ըսածիս, բայց շատերէ և շատ տեղեր տեսնուած է, և ամենէն զարմանալն այն է որ շատ քաջառողջ են. նաեւ այր և կին առողջ և բնականաբար գեղեցիկ են: Իրանց արտերէն կը հանեն ցորեան, գաւի, սպ, սիսեռ, շուշմա (սուսամ), ֆիկ, և այլն, և պարտաւորութեամբ մէջ քանի մը տեսակ կանաչեղէն և այգիներէն ընտիր խաղող, որոյ գինին Կիպրոսի գինին աւել աղին է: Իրենց ուտելիքն է ցորենի, գարիկ, կըկըլը և կորեկի հաց, լուբիայով և քանի մը խոտով ու իւրով բնական կերակուրներ: Կին մը ամուսնանալէն 40 տարի վերջը միայն կրնայ իր կենսային, կեռուրին և տաղբին հետ խօսիլ: 40 տարի շարունակ անխօս պիտոր մընայ որ այս կողմերը մուշը կըսեն: Կիները կաշխատին արտերու, այգիներու և տուններու մէջ. կիները կը բերեն տանը պէտք եղած ջուրը, կովերուն խոտը և այլն. կիները կը մաքրեն ախոռները, կը կթեն կաթնատու կենդանիները, կաթը մածուն և իւր կը շինեն. նոր հարսերն աւել պէտք է աշխատին կիններէն. փոքրիկ տղայքը գաւառներ կարծեն, պատանիները ոչխարները, իսկ երիտասարդները կովերն ու եղներն Շատ տուներու մէջ չորս հինգ վեց եղբայր ամուսնացեալ և գաւառներու տէր միաբան կը մընան, բաժնուիլը մեծ մեղք և ամօթ կը համարին. երեկոյ և առաւօտ եկեղեցի կը թան. պահքներն ու ծովերն անթերի կը պահեն, կիւրակէ և տօնի օրերը երբեք չեն աշխատիր, և Առաջաւորաց պահքին շաբթուն կենդանիներուն իսկ ծով պահել կուտան: Այլ լուրերն յաղթանգամ, ուժեղ և սուղոյ են, կանայք գեղեցիկ և սուր աչքերով, ցարդ կը փայլն իրենց վրայ հայկական քաջութիւնը. իսկ Գուրգերէն սովորած են շատ մը սուտ խօսիլ և կերպ կերպ անխառնութիւններ. օրինակի համար, այր մը մեռած օրը, գիւնն անցեալը չը վերցուցած, ուրիշ այր մը կըրթայ պէյի մը կամ աղայի մը հինգ ոսկի տալով մեռեալին կինը բռնութեամբ կը քաշէ կը տանի և նորա հետ կամուսնանայ, և որ առաւել է, աղքատներ, խնամին, եղբոր կինը, քեռիին աղջիկը աւանդներ և երկու կին ունեցողներ ալ լսեցի և տեսի: Եւ այս ամեն գեղեցիկները կը գործեն իրենց Տէր պապային օրհնութեամբ և պսակի խորհրդով: Քահանաներն ալ չափազանց աղէտ են. ցաւալն վիճակ: Հարսանիքը զաւրտի կըսեն Գրգայ երկուդէն: Այս տարի որ քիչ մը ազատութիւն գտան, արգեն սիրահար ըլլալով թմբուկի և պարելու, 16 օր աւելց հարսանեաց հանգեսները. փեսայն հագուելըն լուսաւոր ախոռը կը պահեն, յետոյ քանի մ'երկտասարդներ զայն փնտռելու կըլլեն գէնքով ու իրերով: Փեսայ գովելը և ծառ

շինելը խիստ հնարաբերական էր, բայց մանրամասն նկարագրելու թէ միջոց չունիմ եւ թէ ընթերցողք կը ձանձրանան: Անբաժանելու մը ի ձեռքին փեսային քովէն կը լինէր թէ յիշեցնէր եւ թէ ի տուն: Իսկ փեսան անխոս եւ բերնին վրայ թաշկինակ մը կը դնէր մինչեւ 15 օր, հարսը՝ ինչպէս արդէն ըսինք, 40 տարին պիտոր համբէ:

Գիշ մ'ալ ասոնց դրացի ըսողներուն վերայ խօսիլ կուզեմ:

(Կը շարունակվի)

ԻՏԱԼԻԱ

Ինչպէս արդէն «Մշակ» նախորդ համարներին մէջ մէջ ասացինք, բարձրագոյն ատենի բոլոր ընտելութիւնները հիշեցնելու եղեւ նազարդ Պատանանտէի պաշտպանի այն առաջադրութիւնը, որ իբրեւ Պատանանտէ կամեցել է կատարել յայտնի ոճագործութիւնը խելացործութեան ժամանակ. բոլոր բժշկական եւ դատաստանական հետազոտութիւնները պարզ ցոյց են տալի, որ Պատանանտէի հետ երբեք այդպիսի բան չէ պատահել միայն ամենը զարմացած են, որ այդ ոճագործութեանը ոչ մի գործակից չը գտնվեցաւ: Կառավարութեան եւ ոստիկանութեան բոլոր խուզարկութիւնները ապարդիւն մնացին: Պատանանտէ կամ ոչինչ չը գիտէ, եւ կամ եթէ գիտէ էլ հաստատ չ'առել է ոչինչ չափել: Ատենը, իր հարցու փորձի միջոցին, թէ նոյն իսկ մեղադրվածից եւ թէ նրա բոլոր վկաներից, կարծես այս միակ եղբակցութիւնը դուրս բերեց, որ Պատանանտէի վարձուքի մէջ աւելի մի խորհրդաւոր գաղտնիք կայ, քան թէ սոցիալականութիւն: Այժմ, որ Պատանանտէի ոճագործութեան մէջ գործակից չեն գտնուում, անշուշտ մամուլը որչափ կծու ծաղրաբանութիւններ է անում այն յետադէմների մասին, որոնք հենց ոճագործութեան միւս օրն արդէն լուր տարածեցին թէ բոլոր սոցիալականների, ազատամիտների եւ այլ զանազան կուսակցութիւնների մատը խառն է այդ բանում: Ատենը շատ փոքր վիճաբանութիւնից յետոյ, Պատանանտէին մահուան դատապարտեց:

ԹԻԻՐԵԻՍ

Մարտի 7-ին սուլթանը մի իրագէտ հրատարակել տուեց, որի մէջ որոշված էին Յունաստանի սահմանները: Այս որոշման համեմատ Թիւրքիան պահպանում է Սանինա եւ զրիթէ բոլոր Արտայի ծոցը: Բայց լրագիրները կարծում են, որ այդ բաժանմունքները ոչ Յունաստանը կընդունին, եւ ոչ էլ օտար պետութիւնները: Անգլիական մի քանի լրագիրներ յայտնում են, որ եգիպտական նոր միջնորդութեան կազմակերպվելուն նորանոր արգելքներ են պատահում: այդ լրագիրները ասում են, որ եգիպտոսի խելովը յայտնել է անգլիական եւ ֆրանսիական ղեկավարներին, որ եթէ օտար պետութիւնները անպատճառ ցանկանում են, նա պատրաստ է ընդունելու Նուբար-փաշային, բայց հետեւանքների մասին նա յանձնառու չէ լինում: պատասխանատու լինելու: Դեռ ոչինչ լուր չը կայ թէ անգլիական եւ ֆրանսիական կառավարութիւնները ինչ են մատչելի պատասխաններ:

«Times» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ Բ. Գուրը Սալոնիկում, Նափոկոպոլում եւ Գիւմուրջնայում երեք բրիգադներ է գետնել, այս բանին առիթ է տուել այն լուրը, որ բոլորները դիտաւորութիւն ունեն Մակեդոնիայում ասպատակութիւն գործելու: Բացի այս թիւը զօրքերը ահադին բազմութեամբ կենտրոնացնում են Սալոնիկի եւ Նափո-Բազարի մէջ: Ֆրանսիական «Corresp. Politique» լրագ-

րի խօսքերին նայելով, փետրվարի մինչեւ տասնութնորսը Օսման-Նուրի եւ Սալիհ փաշաների հրամանատարութեան ներքոյ գտնված զօրքի թիւը հասնում էր մինչեւ 75,000:

ՆԱՄԱԿ ԹԻՐԵՐԻՍԻՑ

Վան, 21 փետրվարի

Վանի մէջ եւ շրջակայներն այս օրեր աւագակութիւններն պակասած են: Բայց մի կարծէք թէ թիւրքաց կառավարութիւնն սկսած է բարեկարգութիւններ գործադրել: Ընտելութիւնն է որ փոքր ի շատ հանգստութիւն տուած է գիւղացիներուն, ոչ թէ կառավարութիւնն: Չմեռ ժամանակ երբ ձանապարհներն ձիւնով ծածկուած էր լինէն, աւագակութիւններն կը պակսէին: Վանի նախորդ կառավարիչներէն Միւնիք փաշային մի օր գիւղացիներ գանգատ տուած էին թէ աւագակներ կը գան կը կողոպտեն զիրենք: փաշան պատասխաններ էր թէ՛ մի ամիս ալ համբերեցէք, ձմեռը կը գայ եւ կաղաթը աւագակութիւններէ: Վայ այն ժողովուրդին որ իւր յոյսը պէտք է դնէ երկրիքէն գալիք ձիւնին եւ անձրեւին վրա միայն: Ես բոլորովին համաձայն եմ «Մշակ» այն մտքի հետ թէ թիւրքաց կառավարութիւնն ապագայ չունի. նա այն աստիճան ապակասուած եւ զեղծուած է որ չի ուզուիր: հետեւապէս հայեր պէտք է օգուտ քաղեն, որչափ կարելի է, բարեկարգութիւն խոստումներէն: Բայց պէտք չէ որ մեծ յոյս դնեն խոստացուած բարեկարգութիւններուն վրա, այլ պատրաստուին, ոյժ կազմեն մի օր զիրենք պաշտպանելու եւ իրենց իրաւունքներ պահանջելու համար:

Վանի երկրասարգութեան մէջ զովքի եւ յուսադիւ շարժումներ կը տեսնուին այժմ: Թէն այնպիսի վատ հայեր ալ կը գտնուին, ինչպէս ամեն տեղեր նոյնպէս եւ այստեղ, որք զնացներ փաշային մասնէր են թէ մի քանի հայ երկրասարգներ զինակիր անուն ընկերութիւն կազմած են, բայց երկրասարգութիւնն ամենին կարողութիւն չը տալով այդպիսի վատ մարդկանց զրպարտութիւններուն, կը շարունակէ իւր յառաջադիմական շարժումներ: Անցեալ ամիսէն սկսած չորս անգամ թաղարկութիւններ կ'ապացուցին Վանի մէջ. նրաթիւնն առնուած էին ազգային թէ՛ հին եւ թէ՛ նոր կեանքէն: Գիւղացիներու կրած թշուառութիւններն որք մասամբ նկարագրուած էին այդ թաղարկութիւններուն մէջ, մեծ տպաւորութիւն կանէին հանդիսականներուն վրա: Նահանգապետ փաշան ալ իւր կողմէն մի քանի անձեր զրկած էր որ ներկայ գտնուին այդ հանդէսներուն եւ տեղեկութիւն հաղորդեն իրեն:

Վարդանանց նահատակութեան տարեդարձի օրը «Հայրենասէր ընկերութիւն» հանդիսատար կերպով տօնեց իւր տեղեկութեան տակ եղող Հայկազեան վարժարանին մէջ: Լօնդօնի «Standard» լրագրին թղթակից պ. Շուվէր որ նոյն օրեր Վան եկած էր, ներկայ գտնուեցաւ այդ հանդէսին. նոյնպէս եւ ամբիկացի պ. Պարնըմ: «Հայրենասէր ընկերութիւն» ոչ միայն Վարդանանց տարեդարձի, այլ եւ Հայկազեան վարժարանի բացման Եւ տարեդարձի հանդէսն կը կատարէր նոյն օր: Բացի հայերէն ատենախօսութիւններէ եւ հայրենասիրական ոտանաւորներէ ընկերութեան քարտուղար պ. Մ. Թէրլէմէզեան ֆրանսերէն լեզուով մի ձառ կարդաց որով մէջ մի քանի տողով բացատրուած էին հայ ազգի այժմեան դրութիւնն եւ պահանջներն եւ թէ հայրենասէր ընկերութիւնն ինչ բան կը սպասեն (նշվելային): Պ. Շուվէր (Schuer) ոտքի կանգնած, մի քանի խօսք խօսեցաւ: ֆրանսերէն լեզուով որով պ. Մ. Գորթուգալեան իւր մօտ կանգնած կը թարգմանէր ժողովուրդին: Ձեր ընթերցողներուն ձաշակ մը տուած լինելու համար, այստեղ կը գրեմ նորա խօսքերէն մի քանի: «Շատ գեղեցիկ կերպով խորհրդէք, ըսաւ, ձեր նախնիներուն կրօնի համար արած պատերազմի յիշատակը միացունէ նախապաշարունակներու եւ տղիտութեան դէմ ձեր նոր սկսած պատերազմի յիշատակին հետ: Ձեր այս պատերազմը աւելի մեծ է եւ վսեմ որով արդիւնքը քիչ ժամանակէն պիտի վայելէք եթէ շարունակէք: Գուք ձեր յառաջադիմական շարժումներով Ասիայի մէջ ձեր վրա պիտի հարկէք եւրոպայի ուշադրութիւնը եւ եւրոպական ազգեր պիտի համակրեն ձեզ: Ուրախ եմ որ հայ ազգը վերջին ժամանակներ սկսեր է զգալի յառաջդիմութիւն անել. պ. Լայարդը, անգլիական

դեսպանը Կ. Պոլսի մէջ, 25 տարի յառաջ այս տեղէն անցած ժամանակ երեք նախակրթարան միայն կայ երբ Վանի մէջ եւ գիւղերն վարժարան անունով չէնք չը կայ երբ: Բայց ես այժմ կը տեսնեմ 10 նախակրթարան Վանի մէջ եւ Կ. Պոլսի հաստատուած մի ընկերութիւն ալ հետզհետէ նախակրթարաններ կը բանայ Վանի գիւղերն: Պ. Լայարդը այստեղէն անցած ժամանակ հայեր նախակրթական մի նոր վարժարան բացած էին. այդ առաջին մեծ քայլն էր յառաջադիմութեան ձախուղանքին մէջ: Այժմ ես կը տեսնեմ այստեղ մի նոր բացուած վարժարաններ, այս ալ յառաջադիմութեան երկրորդ մեծ քայլն է: Հայեր թող իտալայէն օրինակ առնեն, իտալիան ազատեց իտալիային. Հայաստանի ազատողն ալ Հայաստան պիտի լինի, դուր տեղ օտարներու վրա յոյս մի դնէք. ես ուրիշներու նման չեմ ուզեր խաբել զձեզ, անգլիացիի պէս կը խօսեն: Գուք շարունակեցէք ձեր սկսած յառաջդիմական գործեր, ցոյց տուէք ձեր արժանաւորութիւնները եւ ուրիշ ազգեր իրենց շահուն համար կը ստիպուին համակրութիւն ցոյց տալ: Ես շատ ուրախ եմ նկատելով որ դուք այս հանդէսը կանգնէք բուն իսկ ձեր ազգասիրական եւ ազնւոյն եւ ոչ թէ օտարէ թելադրուած: Պատիւ կը համարիմ ինձ այսպիսի հանդէսի մէջ գլխունդ: Պ. Պարնըմի խօսածներէն ալ հետեւեալ մասը միայն յառաջ կը բերեմ որ նամակս շատ չերկարի: Գուք շատ ցաւած էք, ըսաւ Պարնըմ, որ ձեր ցանկացած ինքնավարութիւնը չը ստացաւ եւրոպայէն: Ես հայասէր եմ, բայց հայ չեմ. հետեւապէս կարող եմ աւելի սառնարիւնով մտածել այդ գործի վրա, քան թէ դուք: Ես մարգարէ չեմ, ոչ ալ մարգարէի որդի, բայց կը վարկանամ որ թէ այդ ինքնավարութիւնը ունենալով, աւելի պատիւ կը դառնար ձեր գլխին վրա քան թէ օրհնութիւն: Այնտեղէն որ դուք զձեզ ամեն կերպով պաշտպանելու համար բաւական ոյժ ունենաք, բոլորովին օտարներու վրա յոյս մի դնէք: Ահա Պարնըմի դաշնագրի 61-րդ, յօդուածը հիմաւորան համար բաւական իրաւունք տուած է ձեզ. աշխատեցէք գործադրել այդ իրաւունքը, շարունակեցէք ձեր յառաջադիմութեան գործը եւ ես մեծ հաւատ ունիմ ձեր վրա թէ դուք քիչ ժամանակէ յետոյ կը ստանաք ձեր ցանկացած ինքնավարութիւնը»

Նոյն երեկոյն պ. Շուվէր հրաւիրուեցաւ ճաշկերպի հայ վաճառականներէն Տէր-Պօղոս'ան պ. Գէորգի տուն ուր բաւական բազմութիւն հաւաքուած էր հայոց երեկներէն, Սեղանին վրա ջերմ եռանդով կը խօսակցէին եւ բաժակներ կը պարպէին Հայաստանի համար, բնականապէս եւ Անգլիայի համար: «Անգլիան այնչափ անմիտ չէ, ըսաւ պ. Շուվէր, որ Ռուսաստանի սահմաններուն վրա գտնուող մի ժողովուրդի համակրութիւնը չուզէ ունենալ: Ես ձեզ կարող եմ հաստատապէս ասել թէ Անգլիան իւր պատուոյն եւ շահուն համար պիտի աշխատի գործադրել տալ իւր խոստացած բարեկարգութիւնները: չեմ ասել թէ այս շաբաթ կամ այս ամիս, բայց անշուշտ այս տարի: մի քիչ ալ համբերեցէք: Այսօր հանդէսին մէջ խօսուած մի ոտանաւոր *) գանգատներ կը պարունակէր եւրոպայի դէմ թէ չը պաշտպանեց հայոց դատը. բայց պէտք է որ դուք ալ խոստովանիք թէ գործերը Հայաստանի մէջ այն աստիճանի հասած չէին որ եւրոպան ստիպուէր պաշտպանել ձեր դատ եւ ձեր ուղած տալ: Գաղափարներ թիւնը գլխութիւն չունին. նա ամեն բանի մէջ չափ կը փնտռէ. այնպէս վարկեցէք որ ուրիշները չափ ունենան զձեզ պաշտպանելու մէջ եւ ստիպուին պաշտպանել: Գետոյ խմելով «Հայրենասէր ընկերութեան» տեսուչ պ. Մարկոս Նաթանեանի կենացը, իւր խնդակցութիւն յայտնեց այդպիսի մի ընկերութիւն տեսած լինելուն համար Վանի մէջ եւ երկու օմ, ոսկի նուէր տալով պատուաւոր անդամ գործեցաւ: Հայրենասէր սանուց ընկերութեան: Պ. Շուվէր Վանէն պիտի երթար Բաղէշ, Մուշ, Տիւրքմէն-Քիւր եւ ձեզերի կողմերը, ուր ըսողներ ապստամբած էին, բայց հեռագիր ստացաւ այստեղ ընտանեկան գործերու համար եւ ստիպուեցաւ անմիջապէս վերադառնալ եւրոպա: Երբ իմացաւ թէ Ռուսական հրկապտոս պիտի գայ այս տեղ եւ թէ նորա անունով նամակներ եւ լրագիրներ բերած է փոստն (թէ պէտք դեռ հրկապտոսն չէ եկած եւ չեմք ալ զիտեր թէ երբ պիտի գայ),

*) Գառաւ Գաթիպայի գրած ոտանաւորն է «Գողթը առ եւրոպան» վերնագրով որ Հայրենասէր ընկ.» անդամներէն մին կարդացած ժամանակ պ. Շուվէրին թարգմանած է եղեր պ. Պարնըմ որ լաւ հայերէն գիտէ:

խօսեց լուր հաղորդեց Կ. Պոլսի թէ պէտք է շուտով Անգլիական հրկապտոսն զրկել Վան: Վարագի վանքի վարժարանին երկու օմանեան ոսկի նուիրեց: «Արարատեան ընկ.» վարժապետանցն այցելելով իւր գոհունակութիւն յայտնեց եւ վեց օմ, ոսկի նուիրեց:

Կիմանա՞ք թէ «Արարատեան ընկերութիւն» քիչ ժամանակէն պիտի սկսի նախ Տիւրքի եւ Տիւրքուպի լեռնաբնակ քաղաքներէն աշակերտներ ընդունել իւր վարժապետանոցի մէջ որով աւաղին քայլն առած կը լինի ուսում եւ քաղաքակրթութիւն տարածելու իւր հարկան կիսավայրենի ժողովուրդներու մէջ: Կը ցանկանք որ ասորիներէն յետոյ սկսի ըսողներու համար ալ աշխատիլ: որչափ ըսողներ կան որք հայ սերունդէ յառաջացած են: Մոտակայի ըսողներ թէն չեն ընդունիր թէ հայ սերունդէ եղած լինին, բայց աւանդութիւնով կը պտտուի իրենց մէջ թէ Մամզուն (Մամիկոնեան) վարդաւն անուն մի քաջի ցեղէն սերած են եւ կը պատմեն վարդաւնաց պատերազմները, մեր մատենագիրներու պատմածէն քիչ տարբեր կերպով: Մեք կը կարծեմք թէ՛ ալ ժամանակը եկած է ըսողներին համար աշխատելու:

Հրանտ

ՄՇԱԿԻ ԼԵՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԵՏԼԵԱՆԱՅԱ, 12 մարտի «Полосы» լրագրին հեռագրում են, որ կոմս Լօրիս Մելիքով մնաց Վէտլանիկում երկու ժամ, յետոյ շողեւանով ճանապարհ ընկաւ դէպի Վօլգայի վերին ընթացքը:

ՏԵՏԻՆԻԷ, 12/24 մարտի: Գիշերը իշխան Նիկոլայի միակ ընդեր վախճանվեցաւ:

ՏՐԻԵՍՈ, 12/24 մարտի: Ընտրութիւններ մէջ պետական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ:

ՎԻԵՆՆԱ, 12/24 մարտի, «Polit. Correspond.» լրագիրը ասում է, որ բրիտանական նաւատորմը հրաման ստացաւ մնալ Բէզելի նաւահանգստում մինչեւ մայիսի սկիզբը, եւ մինչեւ որ ռուսաց զօրքերը բոլորովին կը զատարկեն Բալկանները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի «Русский Инвалид» լրագիրը հաղորդում է, որ Կայսրը բարեհաճեց ընդունել Կարաբիքեան բարեատրինսկու զնդի շէֆի (առաջնորդ) կոչումը:

ԲԵԼԳԻՐԱ, 13/25 մարտի: Վիեննայում սերբիական ղեկավար է նշանակվում Միլոյվօվիչ: Վասիլիւկ հրաժարվում է պաշտօնից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի: Այսօր մի անյայտ չարագործ փողոցում բեկովիկեց երկու անգամ կրակ արձակեց զենքերալ Դրէնտէնի վրա: Դրէնտէն չը վերադարձեց: չարագործը անհետացաւ: Արքունական ընտանեքի Լիվադիա գնալը յետաձգվեց մինչեւ ապրիլի 6-ը:

ԽԱՐԿՈՎ, 13 մարտի: Խարկովից հաղորդում են «Полосы» լրագրին, որ այնտեղ բանտարկել են մի մարդու, որը խոստովանել է, որ ինքն էլ մասնակից է եղել իշխան Կրապօսկինի սպանմանը: Այսօր հասաւ այստեղ նոր նահանգապետ Վալ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 13 մարտի: Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 96 ռ. 65 Կ., երկրորդ 96 ռ. 50 Կ., երրորդ 95 ռ. 62 Կ., չորրորդ 95 ռ. 75 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսը արժէ 237 ռ. 55 Կ., երկրորդ 234 ռ. 50 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսը 93 ռ. 75 Կ., երկրորդ 93 ռ. 50 Կ., ոսկի 8 ռ. 40 Կ.: Ռուսաց 1 ռուբլ. Լօնդոնի վրա արժէ 23.37 պէնս, ռուսաց 100 ռուբլ. Գերմանիայի վրա արժէ 199 մարկ, 5 պֆ., Փարիզի վրա 246 ֆր. 25 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր — Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

